Գլխավոր տեղեկություն	
Համար	N 116-Ն
Տիպ	Հրաման
Ակտի տիպ	Ինկորպորացիա (01.07.2025-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	ՀՀԳՏ 2020.03.20/10(678) Հոդ.75
Ընդունող մարմին	Արդարադատության նախարար
Ընդունման ամսաթիվ	16.03.2020
Ստորագրող մարմին	Արդարադատության նախարար
Ստորագրման ամսաթիվ	16.03.2020
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	15.04.2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

16 մարտի 2020 թ.
քաղ. Երևան

N 116-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՊԱՐՏԱՊԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թ. դեկտեմբերի 12-ի ՀՕ-294-Ն օրենքի 72-րդ հոդվածի 12-րդ մասի 2-րդ կետով.

Հրամայում եմ՝

1. Հաստատել պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 15-ից:

Ռ. Բադասյան

Հավելված
արդարադատության նախարարի
2020 թվականի մարտի 16-ի
N 116-Ն հրամանի

ԿԱՐԳ

ՊԱՐՏԱՊԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ

1. Պարտապանի գույքի հրապարակային սակարկություններով վաճառքն իրականացվում է սնանկության գործով կառավարչի (այսուհետ՝ կառավարիչ) կողմից՝ բաց աճուրդով, որը կազմակերպում և անցկացնում է կառավարիչը:

2. Կառավարիչը հրապարակային սակարկություններով գույքի վաճառքը թույլատրելու մասին դատարանի որոշումն ստանալու օրվանից՝ հնգօրյա ժամկետում ապահովում է առաջին աճուրդի անցկացման մասին հայտարարության հրապարակումը: Երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդների մասին հայտարարությունները հրապարակվում են նախորդ աճուրդը չկայացած համարվելու օրվանից հետո ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում:

3. Աճուրդի մասին հայտարարությունը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Կառավարիչը հայտարարությունը կարող է հրապարակել նաև զանգվածային լրատվության միջոցներով:

(3-րդ կետը փոփ. 16.06.25 N 374-Ն)

4. Աճուրդի մասին հայտարարությունը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) սնանկության գործի համարը, պարտապան իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, կառավարչի անունը, ազգանունը, կոնտակտային տվյալները.

2) աճուրդի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը (հասցեն).

3) լոտի համարը, անվանումը, նկարագիրը, (եթե լոտը բաղկացած է մեկից ավելի գույքերից, ապա դրանց նկարագիրը, եթե լոտն իրավունք է, ապա դրա գործողության ժամկետը), լոտի մեկնարկային գինը, մեկից ավելի լոտերի դեպքում՝ լոտերի վաճառքի հերթականությունը, կիրառելի լինելու դեպքում՝ գույքի ֆիզիկական վիճակը (մաշվածությունը), գտնվելու վայրը, լոտի նկատմամբ սահմանափակումները (գույքի նկատմամբ գրանցված իրավունքները).

4) աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.

5) աճուրդի նախավճարի և մասնակցության վճարի չափը, վճարման կարգը և սնանկության հատուկ հաշվի հաշվեհամարը, որին պետք է կատարվեն վճարումները.

6) աճուրդի մասնակցության հայտի ներկայացման կարգը և վայրը (հասցեն), ինչպես նաև նշում այն մասին, որ աճուրդի վերաբերյալ ծանուցումներն իրականացվելու են հայտում ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով.

7) աճուրդի ձևը, աճուրդի անցկացման և հաղթողին որոշելու կարգը.

8) աճուրդում հաղթած մասնակցի կողմից վաճառքի գնի վճարման ժամկետները.

9) լոտն ուսումնասիրելու ժամանակը, վայրը և կարգը.

10) նշում այն մասին, որ աճուրդը կազմակերպվում և անցկացվում է սույն կարգին համապատասխան:

(4-րդ կետը փոփ., լրաց. 16.06.25 N 374-Ն)

5. Աճուրդը պետք է անցկացվի աճուրդի մասին վերջին հայտարարության հրապարակման օրվանից ոչ շուտ, քան 15 օր, և ոչ ուշ, քան մեկ ամիս հետո:

6. Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդի հայտարարությամբ սահմանված ժամկետում՝ բայց ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ աշխատանքային օր առաջ, կարող են աճուրդի մասնակցության հայտ (այսուհետ՝ հայտ) ներկայացնել աճուրդի մասին հայտարարությունում նշված հասցեում գտնվող դատարանի գրասենյակ՝ հայտը գրասենյակի միջոցով կառավարչին փոխանցելու (տրամադրելու) համար: Հայտը գրասենյակում մուտքագրվելու դեպքում դրա վրա կատարվում է նշում մուտքագրման ամսաթվի և ժամի վերաբերյալ:

(6-րդ կետը փոփ. 03.08.20 N 300-Ն, լրաց. 16.06.25 N 374-Ն)

7. Հայտում պետք է նշվեն.

1) հայտատու իրավաբանական անձի անվանումը, ծանուցման հասցեն, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի հասցեն, իրավաբանական անձի ներկայացուցչի (նրա անունից հանդես եկող անձի) անունը, ազգանունը, կոնտակտային տվյալները.

2) հայտատու ֆիզիկական անձի անունը, ազգանունը, ծանուցման հասցեն, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի հասցեն, կոնտակտային տվյալները, ներկայացուցչի միջոցով հանդես գալու դեպքում՝ ներկայացուցչի անունը, ազգանունը, ծանուցման հասցեն, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի հասցեն, կոնտակտային տվյալները.

3) պարտապանի անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը).

4) աճուրդի անցկացման օրը, ամիսը, տարեթիվը.

5) կառավարչի անունը, ազգանունը.

6) հայտին կցվող փաստաթղթերի ցանկը:

(7-րդ կետը լրաց. 16.06.25 N 374-Ն)

8. Հայտատուն հայտում նշում է կատարում նաև այն մասին, որ տեղեկացված է, որ ծանուցումները և փաստաթղթերը ուղարկվելու են հայտում նշված էլեկտրոնային փոստի հասցեին և որ դա համարվում է պատշաճ ծանուցում (հանձնում): Հայտատուն կրում է իր կողմից տրամադրված էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ուղարկված ծանուցումները չկարդալու անբարենպաստ հետևանքները: Հայտը ստորագրվում է հայտատուի (նրա անունից հանդես եկող անձի, ներկայացուցչի) կողմից:

(8-րդ կետը խմբ. 16.06.25 N 374-Ն)

9. Հայտին կից ներկայացվում են.

1) լոտի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով նախավճարի վճարումը աճուրդի մասին հայտարարությունում նշված սնանկության հատուկ հաշվին կատարված լինելու փաստը

հաստատող անդորրագիրը.

2) լոտի մեկնարկային գնի 1 տոկոսի, բայց ոչ ավել, քան նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով աճուրդի մասնակցության վճարի վճարումը աճուրդի մասին հայտարարությունում նշված սնանկության հատուկ հաշվին կատարված լինելու փաստը հաստատող անդորրագիրը.

3) լիազորագիր, եթե հայտատուն հանդես է գալիս լիազորված անձի միջոցով.

4) իրավաբանական անձ հայտատուների դեպքում՝ նաև պետական գրանցումը հավաստող փաստաթղթի և կանոնադրության, ինչպես նաև իրավաբանական անձի ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենները.

5) անհատ ձեռնարկատեր հայտատուների դեպքում՝ նաև պետական հաշվառումը հավաստող փաստաթղթի և անձը հաստատող փաստաթղթի պատճենները.

6) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ հայտատուների դեպքում՝ նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

(9-րդ կետը փոփ. 16.06.25 N 374-Ն)

10. Աճուրդին կարող են ներկա գտնվել նաև աճուրդի մասնակից չհամարվող անձինք, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի (այսուհետ՝ նախարար) գրավոր հանձնարարությամբ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացուցիչները (այսուհետ՝ աճուրդի մասնակից չհամարվող անձ):

(10-րդ կետը փոփ. 16.06.25 N 374-Ն)

11. Աճուրդի մասնակից չհամարվող անձը աճուրդին ներկա գտնվելու համար կառավարչին է ներկայացնում իր անձը հաստատող փաստաթուղթը, իսկ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացուցիչը՝ աճուրդին ներկա գտնվելու վերաբերյալ հանձնարարականի բնօրինակը և իր անձը հաստատող փաստաթուղթը: Կառավարիչն իրավասու է սույն կետում նշված փաստաթղթերը չներկայացրած անձին չթույլատրել ներկա գտնվել աճուրդին:

(11-րդ կետը փոփ., լրաց. 15.05.20 N 173-Ն, խմբ. 16.06.25 N 374-Ն)

12. Աճուրդն անցկացվում է աճուրդի մասին հայտարարությունում նշված՝ աճուրդի անցկացման վայրում, օրը և ժամին:

13. Աճուրդի ողջ ընթացքը ձայնագրվում, իսկ հնարավորության դեպքում՝ նաև տեսագրվում է կառավարչի կողմից, ինչի մասին կառավարիչը պարտավոր է նախազգուշացնել աճուրդի մասնակիցներին և ներկա գտնվող այլ անձանց:

14. Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանն ու ենթարկվել սույն կարգով սահմանված կանոններին, ինչպես նաև օրենքից և սույն կարգից բխող և աճուրդի կազմակերպմանն ու անցկացմանն ուղղված կառավարչի օրինական ցուցումներին:

15. Եթե աճուրդի են ներկայացված մեկից ավելի լոտեր, ապա դրանց վաճառքն իրականացվում է աճուրդի մասին հայտարարությունում շարադրված հերթականությամբ:

16. Աճուրդն սկսելուց առնվազն մեկ օր առաջ կառավարիչը ստուգում է հայտերի և դրանց կից փաստաթղթերի՝ սույն կարգին համապատասխանությունը: Սույն կարգին համապատասխան հայտ ներկայացրած հայտատուները համարվում են աճուրդին մասնակցելու իրավունք ստացած: Կառավարիչն աճուրդն սկսելուց առնվազն մեկ օր առաջ էլեկտրոնային եղանակով ծանուցում է հայտատուներին աճուրդին մասնակցության նրանց կարգավիճակի վերաբերյալ՝ եթե հայտում նշվել է էլեկտրոնային փոստի հասցե:

(16-րդ կետը լրաց. 15.05.20 N 173-Ն, խմբ. 16.06.25 N 374-Ն)

17. Աճուրդն սկսելուց անմիջապես առաջ աճուրդին մասնակցելու իրավունք ստացած հայտատուները կառավարչին են տրամադրում իրենց անձը հաստատող փաստաթղթերը, իսկ աճուրդին մասնակից չհամարվող անձինք՝ սույն կարգի 11-րդ կետում նշված փաստաթղթերը, և կառավարիչը գրանցում է նրանց:

(17-րդ կետը խմբ. 16.06.25 N 374-Ն)

18. Հայտը համարվում է սույն կարգի խախտմամբ ներկայացված, և այն ներկայացնող հայտատուն աճուրդին մասնակցելու իրավունք չի ստանում և որպես աճուրդի մասնակից չի գրանցվում, եթե՝

1) հայտը ներկայացվել է սույն կարգի 6-րդ կետում նշված ժամկետի խախտմամբ կամ

2) մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը ամբողջությամբ վճարված չի եղել նախավճարի կամ մասնակցության վճարի գումարը կամ

3) չեն ներկայացվել հայտին կից ներկայացվող փաստաթղթերը կամ

4) հայտատուն կամ հայտատուի ներկայացուցիչը գրանցվելու համար կառավարչին չի ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթը:

(18-րդ կետը լրաց. 15.05.20 N 173-Ն, խմբ. 16.06.25 N 374-Ն)

19. Սույն կարգի 18-րդ կետում նշված դեպքերում կառավարչի կողմից կազմվում է համապատասխան արձանագրություն, որը ստորագրում են կառավարիչը և համապատասխան անձը: Անձի կողմից ստորագրելուց հրաժարվելու կամ ցանկացած այլ պատճառով արձանագրությունը չստորագրվելու դեպքում կառավարիչն այդ մասին նշում է կատարում արձանագրությունում: Եթե անձը չի ներկայացել աճուրդին, ապա արձանագրությունը ստորագրում է միայն կառավարիչը՝ արձանագրությունում նշում կատարելով այդ մասին: Արձանագրության մեկ օրինակը անձի պահանջով տրամադրվում է նրան:

20. Սույն կարգի 18-րդ կետում նշված դեպքերում աճուրդին մասնակցելու համար չգրանցված հայտատուի կողմից վճարված նախավճարը վերադարձվում է նրան՝ սույն կարգին համապատասխան:

21. Սույն կարգի 17-րդ կետով սահմանված կարգով գրանցումն ավարտելուց հետո կառավարիչը հայտարարում է լոտի աճուրդի մեկնարկը՝ նշելով աճուրդի ներկայացվող լոտի համարը, անվանումը, մեկնարկային գինը, որից հետո հայտատուները կարող են ներկայացնել գնային առաջարկ՝ ըստ աճուրդի քայլերի:

22. Հայտատուի առաջին գնային առաջարկը չի կարող պակաս լինել աճուրդի մեկնարկային գնից, իսկ երկրորդ և հաջորդ առաջարկված գները չեն կարող պակաս լինել նախորդ առաջարկված գնից:

23. Գնային առաջարկը կատարվում է նվազագույն հավելման չափից ոչ պակաս չափով (աճուրդի քայլով): Նվազագույն հավելման չափը որոշվում է՝ ելնելով լոտի մեկնարկային գնից՝ հետևյալ կարգով.

1) մինչև 100 000 ՀՀ դրամ մեկնարկային գնի դեպքում՝ 500 ՀՀ դրամ.

2) 100 000 ՀՀ դրամից մինչև 500 000 ՀՀ դրամ մեկնարկային գնի դեպքում՝ 1 000 ՀՀ դրամ.

3) 500 000 ՀՀ դրամից մինչև 1 000 000 ՀՀ դրամ մեկնարկային գնի դեպքում՝ 10 000 ՀՀ դրամ.

4) 1 000 000 ՀՀ դրամից մինչև 10 000 000 ՀՀ դրամ մեկնարկային գնի դեպքում՝ 50 000 ՀՀ դրամ.

5) 10 000 000 ՀՀ դրամից բարձր մեկնարկային գնի դեպքում՝ 100 000 ՀՀ դրամ:

(23-րդ կետը փոփ. 15.05.20 N 173-Ն)

24. Որևէ մասնակցի կողմից գնային առաջարկ ներկայացվելուց հետո կառավարիչը հայտարարում է այդ մասնակցի առաջարկած գինը և այն առաջարկած մասնակցի անունը, ազգանունը (կամ անվանումը), որից հետո երեք անգամ, երկուական վայրկյան ընդմիջումներով հայտարարում է վերջին առաջարկված (ամենաբարձր) գնային առաջարկը: Մինչև առաջարկված ամենաբարձր գնային առաջարկի մասին վերջին՝ երրորդ անգամը հայտարարելը մասնակիցներից յուրաքանչյուրը կարող է ներկայացնել նոր գնային առաջարկ՝ սույն կարգի 23-րդ կետին համապատասխան ավելի բարձր գին առաջարկելով: Վերջին ամենաբարձր գինն առաջարկած մասնակցի տվյալները երրորդ անգամ հայտարարելուց հետո այլ գնային առաջարկ չի կարող ներկայացվել, իսկ տվյալ պահին ամենաբարձր գինն առաջարկած մասնակիցը համարվում է աճուրդում հաղթող և աճուրդը համարվում է ավարտված:

25. Կառավարիչը գրառման թերթիկում գրառում է աճուրդի ընթացքում մասնակիցների կողմից առաջարկված գները և գրառման թերթիկը աճուրդի ավարտին ներկայացնում է մասնակիցների ստորագրմանը: Մասնակիցների կողմից ստորագրելուց հրաժարվելու կամ չստորագրվելու դեպքում կառավարիչը այդ մասին նշում է կատարում գրառման թերթիկում:

26. Աճուրդում հաղթող մասնակցի հետ աճուրդի ավարտից անմիջապես հետո ստորագրվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրություն:

27. Աճուրդի արդյունքների մասին արձանագրությունում, ի թիվս այլնի, պետք է նշվեն.

1) սնանկության գործի համարը, պարտապանի անվանումը կամ անունն ու ազգանունը, կառավարչի անունն ու ազգանունը,

2) աճուրդի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը (հասցեն),

3) լոտի համարը, անվանումը և նույնականացնող տվյալները, լոտի աճուրդի մեկնարկային գինը,

4) աճուրդի հաղթողի անվանումը և ՀՎՀՀ-ն կամ անունը, ազգանունն ու անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հասցեն,

5) լոտի վաճառքի գինը, աճուրդում հաղթած մասնակցի կողմից վաճառքի գնի վճարման ժամկետները:

28. Աճուրդի հաղթողի կողմից արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու կամ արձանագրությունը ցանկացած այլ պատճառով չստորագրվելու դեպքում այդ մասնակիցը զրկվում է այդ աճուրդին մասնակցելու իրավունքից, իսկ եթե տվյալ աճուրդին մասնակցում է մեկից ավելի հայտատու, ապա աճուրդը շարունակվում է գնային առաջարկների ներկայացման փուլից նույն մեկնարկային գնով՝ առանց արձանագրությունը չստորագրած անձի (հայտատուի) մասնակցության: Արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու կամ արձանագրությունը ցանկացած այլ պատճառով չստորագրվելու դեպքում մասնակցի վճարած մասնակցության վճարն ու նախավճարը հետ չեն վերադարձվում:

(28-րդ կետը խմբ. 16.06.25 N 374-Ն)

29. Եթե աճուրդին մասնակցելու համար ներկայացվել է մեկ հայտ, հայտատուն ստացել է աճուրդին մասնակցելու իրավունք և աճուրդի քայլ չի կատարում, ապա հայտատուն համարվում է լոտի մեկնարկային գնով աճուրդի հաղթող:

30. Եթե աճուրդին մասնակցելու համար մեկից ավելի հայտատուներ ստացել են աճուրդին մասնակցելու իրավունք, սակայն նրանցից որևէ մեկը գնային առաջարկ չի ներկայացնում, ապա աճուրդը համարվում է չկայացած, իսկ աճուրդին մասնակցելու իրավունք ստացած հայտատուների կողմից վճարված մասնակցության վճարներն ու նախավճարները հետ չեն վերադարձվում:

31. Աճուրդում հաղթած և աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրած անձը պարտավոր է վճարել լոտի վաճառքի գինը արձանագրությունը ստորագրելուց հետո՝ տասն օրվա ընթացքում՝ նվազեցնելով վճարված նախավճարի չափը: Նշված ժամկետում

վաճառքի գինն ամբողջությամբ չվճարելու դեպքում աճուրդը համարվում է չկայացած, իսկ աճուրդի հաղթողի կողմից վճարված նախավճարը և մասնակցության վճարը չեն վերադարձվում: Վաճառքի գինն ամբողջությամբ վճարվելուց, այն փաստացի սնանկության հատուկ հաշվին մուտքագրվելուց և սահմանված վճարումների կատարումը հավաստող փաստաթղթերը կառավարչին ներկայացնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում կնքվում է լոտի առուվաճառքի պայմանագիր:

(31-րդ կետը փոփ., լրաց. 15.05.20 N 173-Ն)

32. Եթե սույն կարգի 31-րդ կետում նշված ժամկետում կառավարչի՝ որպես վաճառողի, աճուրդի հաղթողի՝ որպես գնորդի (գրավատուի) և այլ անձի՝ որպես գրավառուի, միջև կնքվում է առուվաճառքի և գրավի (հիփոթեքի) պայմանագիր, ապա այդ պայմանագրով գույքի վաճառքի գնի վճարման ժամկետը սահմանվում է պայմանագրի կնքման օրվանից՝ 5 աշխատանքային օր: Սույն կետում նշված կարգով վաճառքի գինն ամբողջությամբ չմուծվելու դեպքում աճուրդը համարվում է չկայացած, իսկ այդ աճուրդի հաղթողի կողմից վճարված նախավճարը և մասնակցության վճարը չեն վերադարձվում:

33. Սույն կարգով նախատեսված դեպքերից բացի աճուրդը չկայացած է համարվում նաև, եթե՝

1) աճուրդին մասնակցելու համար որևէ անձ սույն կարգի պահանջներին համապատասխան հայտ չի ներկայացրել.

2) հայտ ներկայացրած բոլոր անձինք չեն մասնակցել աճուրդին կամ աճուրդին մասնակցելու իրավունք չեն ստացել կամ չեն գրանցվել որպես աճուրդի մասնակից.

3) աճուրդի հաղթողը և սույն կարգի 28-րդ կետի ուժով հաղթող համարված բոլոր անձինք հրաժարվել են ստորագրել աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը կամ արձանագրությունը ցանկացած այլ պատճառով չի ստորագրվել.

4) դատարանի որոշմամբ ընդհատվել է լոտում ներառված գույքի իրացումը և եթե այլ լոտեր առկա չեն:

(33-րդ կետը փոփ. 16.06.25 N 374-Ն)

34. Եթե աճուրդը համարվել է չկայացած սույն կարգի 33-րդ կետի 1-3-րդ կետերով նախատեսված հիմքերով, ապա յուրաքանչյուր հաջորդ աճուրդի համար լոտի մեկնարկային գինը նվազեցվում է հետևյալ չափով.

1) անշարժ գույքի դեպքում՝ լոտի նախորդ աճուրդում մեկնարկային գնի 10 տոկոսի չափով.

2) շարժական գույքի դեպքում՝ լոտի նախորդ աճուրդում մեկնարկային գնի 20 տոկոսի չափով, բացառությամբ սույն կետի 4-րդ ենթակետի.

3) լոտում և՛ անշարժ և շարժական գույքեր ներառված լինելու դեպքում՝ լոտի նախորդ աճուրդում մեկնարկային գնի 10 տոկոսի չափով.

4) թանկարժեք մետաղ կամ քարեր պարունակող պերճանքի առարկաների դեպքում՝ լոտի նախորդ աճուրդում մեկնարկային գնի 2 տոկոսի չափով.

5) պահանջի իրավունքների (դեբիտորական պարտքերի, վճարային պահանջի իրավունք վկայող արժեթղթերի) դեպքում՝ լոտի նախորդ աճուրդում մեկնարկային գնի 10 տոկոսի չափով:

35. Եթե աճուրդին մասնակցելու իրավունք է ստացել առնվազն մեկ հայտատու և այդ աճուրդը համարվել է չկայացած կամ անվավեր, ապա հաջորդ աճուրդի համար աճուրդի մեկնարկային գինը չի նվազեցվում, եթե այլ բան նախատեսված չէ «Սնանկության մասին» օրենքով:

36. Լոտի մեկնարկային գինը տասնհինգ անգամ նվազեցնելուց հետո աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում, իսկ այդ աճուրդը չկայանալու դեպքում աճուրդները շարունակվում են՝ լոտի գինը նվազեցնելով սույն կարգի 34-րդ մասով սահմանված չափերի կեսի չափով:

(36-րդ կետը խմբ. 16.06.25 N 374-Ն)

37. Եթե սույն կարգին համապատասխան հայտ ներկայացրած անձը աճուրդին չի մասնակցում կամ մասնակցում է, սակայն չի հաղթում, ապա նրա կողմից վճարված նախավճարը ենթակա է վերադարձման, իսկ աճուրդի մասնակցության վճարը վերադարձման ենթակա չէ:

38. Հայտ ներկայացրած անձի կողմից վճարված և սույն կարգով նախատեսված դեպքերում վերադարձման ենթակա վճարի գումարը կառավարիչը վերադարձնում է այդ անձի դիմումն ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ գումարը փոխանցելով դիմումում նշված բանկային հաշվի հաշվեհամարին: Սույն կետով նախատեսված դիմումը կարող է ներկայացվել մինչև սնանկության գործի ավարտը:

(38-րդ կետը լրաց. 15.05.20 N 173-Ն, փոփ. 16.06.25 N 374-Ն)

39. Աճուրդը չկայացած համարվելու օրը կառավարիչը կազմում է համապատասխան արձանագրություն՝ որում, ի թիվս այլնի, նշվում է աճուրդը չկայանալու հիմքերն ու պատճառները:

(39-րդ կետը փոփ. 15.05.20 N 173-Ն)

40. Երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդը չկայանալու դեպքում տվյալ պահի դրությամբ բավարարում չստացած՝ պահանջների բավարարման առաջիկա հերթում ընդգրկված պարտատերերն իրավունք ունեն պահանջելու կառավարչից՝ չկայացած աճուրդի մեկնարկային գնով գույքը հանձնել իրենց, որպես տվյալ խմբի բոլոր պարտատերերի ընդհանուր բաժնային սեփականություն, ըստ իրենց գրանցված պահանջներին համամասնական բաժինների: Սույն կետով նախատեսված հիմքով գույքը գնելու համար

պարտատերերը նախքան գնման գործարքի կնքումը սնանկության հատուկ հաշվին կատարում են գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունները, տվյալ գույքի պահպանության, իրավունքի ճանաչման (գրանցման), գնահատման ու իրացման համար կատարված ծախսերը, կառավարչի հավելյալ վարձատրությունը չկայացած աճուրդի մեկնարկային գնի մեկ տոկոսի չափով և գույքի մեկնարկային գնի ու այդ պարտատերի մասով գրանցված պահանջների գումարի տարբերությունը, եթե այն առկա է: Գնման գործարքը կնքվում է սույն կետով սահմանված վճարումների կատարումը հավաստող փաստաթղթերը կառավարչին ներկայացնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

(40-րդ կետը լրաց. 15.05.20 N 173-Ն)

41. Պարտապանի գույքի իրացումը դատարանի կողմից ընդհատվելու դեպքում այդ գույքը ընդգրկող լոտը հանվում է աճուրդից:

42. Սույն կարգի 33-րդ կետի 4-րդ ենթակետի հիմքով աճուրդը չկայացած համարվելու մասին կառավարիչը անհապաղ ծանուցում է աճուրդին մասնակցելու հայտ ներկայացրած, ինչպես նաև աճուրդի մասնակից չհամարվող անձանց և համապատասխան հայտարարություն է հրապարակում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Կառավարիչը սույն կարգի 38-րդ կետին համապատասխան իրականացնում է համապատասխան վճարների վերադարձը:

43. Կազմակերպված աճուրդների արդյունքում հավաքագրված աճուրդի մասնակցության վճարները օրենքով սահմանված կարգով ուղղվում են պարտատերերի պահանջների բավարարմանը:

44. Կառավարիչը պարտավոր է աճուրդի հետ կապված փաստաթղթերը (պայմանագրերը, արձանագրությունները և այլն), ինչպես նաև ձայնագրությունները (տեսագրությունները) աճուրդի ավարտից հետո՝ առնվազն երեք տարվա ընթացքում պահպանել սնանկության գործում:

(44-րդ կետը լրաց. 15.05.20 N 173-Ն)

(հավելվածը փոփ., լրաց. 15.05.20 N 173-Ն, փոփ. 03.08.20 N 300-Ն, փոփ., լրաց. խմբ. 16.06.25 N 374-Ն)

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան
16.06.2025, N 374-Ն	01.07.2025, N 116-Ն
03.08.2020, N 300-Ն	13.08.2020, N 116-Ն
15.05.2020, N 173-Ն	19.05.2020, N 116-Ն

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան